



121. ԿՆԿԱ ՈՒ ՄԱՐԴՈՒ ՀԵՔԻԱԹ

Յիրկվա մթան մարդ թավլից թրիք կը տանն դուա, կնիկ զսիրող
կառնն ներս, զդուռ կը փակե: Մարդ կը դառնա գիկա, կը տեսնա՝
դուռ փակ է:

— Յա՛,— կըսե,— դուռն չորի՞ն փակ է: Կնի՛կ, դուռ բաց,
չորի՞ն հմալ շուտ փակեցիր:

— Էն ո՞ն է,— ներսեն կը ճչա կնիկ:

— Իմալ թե ո՞ն է, ե՛ս իմ, կնի՛կ, զդուռն չորի՞ փակեցիր վրես:

— Հիսո՛ս ու Քրիստո՛ս, աստված զքրդի չը զինա, տես քո
տունոցն յուր է, գնա զդուռ բաց, մտի ներս,— կըսե կնիկ:

— Տո՛ կնիկ, ե՛ս իմ, նոր զթրիք թափեցի, էկա, զդուռ բաց:

— Յաղլիշ իս, խո՛րբան, տես քու տուն չուր է, գնա զտի,
մուրեբ՛ր իս:

Մարդ կըսե.

— Իդա իմ ցանի ամրոց, իգա իմ տան դուռ, չորի՞ն պտի մու-
րիմ:

Թը՛խ. թը՛խ, թը՛խ, ներսեն ձեն տվող չկա:

— Կէղնի օր մուրեբ իմ,— կըսե մարդ:

Չար-նաչար կը մտնա ցանի ամրոց, կը կծկվի մեկ դեն: Աշնան
չէրկեն գիշեր, հարի լուա կը վկվկա ցրտուց: Աղոթրան օր կը բացվի՝
կնիկ զսիրող ճամպու կը դնե, զթունդիր կը վառե, մեկ էլ կը տեսնա՝
մարդն էկավ ներս: Էլ չը թողե օր մարդ զբերան բանա, կըսե.

— Էդ յո՞ւր իս գացի, զիս թողեր իս իգա վերուզամի տուն, մի-
նակ՝ հըտ իմ ճժկըններուն, հե՛: Ո՛ր գինա ո՛ր մեկ սիրողի տունն իս
գացի, քրգի քեֆ իս էրի, հե՛...

Մարդ գտիրտ բացեր, սպեր էր թունգրա բոցի դեմ, կը ճրմըլ-
ողըկա ու կրսե.

— Քու ինաուու մե'կ լե կէրթամ, քու ինաուու՝ մե'կ լե կէրթամ:

